ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

---------- 2021 թ. № --------- Ա

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ

ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 457-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ և 7-րդ կետերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2021 թվականի ամառային զորակոչից մինչև 2023 թվականի ամառային զորակոչը տարկետում տալ մշակույթի և արվեստի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող հետևյալ քաղաքացիներին՝

- Միսակ Սամվելի Հարթենյանին (ծնվ.՝ 1998 թվականի օգոստոսի 16-ին, հասցե՝ ք. Երևան, Վեգների 2/7).
- Արման Վահագնի Հարությունյան (ծնվ.՝ 2000 թվականի հունիսի 30-ին, հասցե՝ ք. Երևան, Շիրազի փ. 52, բն. 54).
- Արմեն Լևոնի Պուչինյան (ծնվ.՝ 2003 թվականի հունիսի 29-ին, հասցե՝ ք. Երևան, Նորագյուղ, տուն 14).

- Դանիել Հրանտի Մելքոնյան (ծնվ.՝ 1999 թվականի դեկտեմբերի 30-ին, հասցե՝ ք. Երևան, Հերացու փ., շ. 18ա, բն. 53).
- Հայկ Արամի Գուրգենյան (ծնվ.՝ 2000 թվականի հուլիսի 6-ին, հասցե՝ ք. Երևան, Կ. Ուլնեցու 66ա շ., բն. 67).
- Վարդան Անդրանիկի Գյոդակյան (ծնվ.՝ 2000 թվականի հունվարի 5-ին, հասցե՝ ք. Գյումրի, Իսահակյան փ., շ. 48, բն. 45).
- Միքայել Նարեկի Աղաջանյան (ծնվ.՝ 2003 թվականի հունվարի 2-ին, հասցե՝ ք. Երևան, Դեմիրճյան փ., շ. 25, բն. 6).
- Անդրանիկ Արմենի Աղաջանյան (ծնվ.՝ 2000 թվականի մայիսի 22-ին, հասցե՝ ք. Երևան, Շրջանային փ., տ. 77/1):

2. Մշակույթի և արվեստի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացի Գագիկ Աշոտի Վարդանյանին (ծնվ.՝ 1996 թվականի հունիսի 13-ին, հասցե՝ քաղ. Երևան, Նոր-Արեշ 15 փող., 3 շենք, բն. 20) շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2021 թվականի ամառային զորակոչից տալ տարկետում մինչև 2022 թվականի ամառային զորակոչը:
3. Մշակույթի և արվեստի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացի Տիգրան Վարուժանի Մարդանյան (ծնվ.՝ 2003 թվականի օգոստոսի 20-ին, հասցե՝ ք. Երևան, Մոլդովական 1, բն 128) շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տալ տարկետում 2021 թվականի ամառային զորակոչից մինչև 2023 թվականի ձմեռային զորակոչը:
4. Սահմանել, որ սույն որոշման 3-րդ կետով նախատեսված քաղաքացի Տիգրան Վարուժանի Մարդանյանի մասով սույն որոշումը ուժի մեջ է մտնում նրա 18 տարին լրանալուց հետո՝ 2021 թվականի ձմեռային զորակոչին՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 6-ի N 711-Ն որոշման 1-ին կետի պահանջը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ**